ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐ ՆՈՐ ՏԱՐՎԱ ԱՌԹԻՎ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՐԳԱՐԺԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԲԱԲԿԵՆ ՍԱՐԿԻՍՈՎԻՆ

Երևան

Ջերմ սրտով շնորհավորում ենք Ձեր Նոր տարին և մաղթում, որ միշտ քաջառողջ ու Ձեզ հատուկ հայրենասիրական եռանդով շարունակեք Ձեր բարձր առաքելությունը հառավել շինություն և ծաղկում մեր մայր հայրենիքի՝ աշխարհի խաղաղության պայմաններում:

Թող նոր տարին լինի լույսի տարի, նվաճումների տարի, խաղաղության տարի, բարօրության տարի:

Հարգալից ողջույնով՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՐԳԱՐԺԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՖԱԴԵՅ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Երևան

Նոր տարվա սեմին ուրախ սրտով բերում ենք Ձեզ Մեր շնորհավորանքը և ամենաջերմ մաղթանքները քաջառողջության և լիակատար փայլուն հաջողությունների Ձեր հայրենանվեր շինարարական գործունեության:

Հայրենաշեն իրագործումներով նաև 1983 տարին թող լինի նոր նվաճումների ու ծաղկումի տարի՝ աշխարհի խաղաղությամբ:

Հարգալից ողջույնով՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

ՍՍՀՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԿՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՄԵԾԱՀԱՐԳ
ՆԱԽԱԳԱՀ Վ. ԿՈՒՐՈՅԵԴՈՎԻՆ

Մոսկվա

Նոր տարվա սեմին Մենք ուրախ ենք, հանուն Հայ Առաքելական Եկեղեցու և նրա հավատացյալ ժողովրդի, ուղղելու Ձեզ Մեր շնորհավորանքները և ամենաբարի մաղթանքները քաջառողջության ի ծաղկումն Ձեր հայրենանվեր գործունեության:

Ջերմորեն աղոթում ենք, որ նոր, 1983 թվականը լինի համընդհանուր խաղաղության և աշխարհի ժողովուրդների եղբայրության տարի, որպեսզի սովետական ազգությունների մեծ ընտանիքը հասնի նորանոր հաղթանակների իր ստեղծարար աշխատանքում:

Խորին հարգանքով՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՐԳԱՐԺԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ՌՈՒԲԵՆ ՊԱՐՍԱՄՅԱՆԻՆ

Երևան

Ուրախ սրտով շնորհավորում ենք 1983 նոր տարին բարի մաղթանքով, որ միշտ քաջառողջությամբ շարունակեք Ձեր ծառայությունները ի խնդիր մեր մայր հայրենիքի վերելքի և մեր ժողովրդի բարօրության:

Նոր տարին թող լինի աշխարհի բոլոր ազգությունների համար համերաշխության ու խաղաղ գործակցության տարի:

Հարգալից ողջույնով՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ս. Էջմիածին

Ընդունեցեք իմ շնորհակալությունը Նոր տարվա առթիվ Ձեր շնորհավորանքի և բարի ցանկությունների համար: Ես նույնպես շնորհավորում եմ Ձեր Նոր տարին: Ի սրտե ցանկանում եմ Ձեզ քաջառողջություն և նորանոր հաջողություններ խաղաղության և ժողովուրդների բարեկամության ամրապնդման համար Ձեր բեղուն աշխատանքում: Նոր տարին մեր հայրենիքի համար լինի խաղաղության և երջանկության տարի:

ԲԱԲԿԵՆ ՍԱՐԿԻՍՈՎ
ՀՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

ԵՐԵՎԱՆ

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԱՉԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ս. Էջմիածին

Ամանորի առթիվ հղում եմ Ձեզ իմ ջերմագին շնորհավորանքները: Ընդունեցեք քաջառողջության, արևշատության իմ անկեղծ մաղթանքները:

Թող 1983 թվականը բերի խաղաղություն ամբողջ աշխարհին, նորանոր հաջողություններ և բարգավաճում մեր հայրենիքին և ամրապնդում ժողովուրդների բարեկամության:

Հարգանքներով՝

ՖԱԴԵՅ ՍԱՐԳՍՅԱՆ
ՀՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ԵՐԵՎԱՆ

ԱՆԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱՉԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ս. Էջմիածին

Շնորհավորում եմ Ձեզ ՍՍՀՄ-ի կազմավորման 60-ամյակի փառապանծ հոբելյանի և Նոր տարվա գալստյան առթիվ: Ցանկանում եմ Ձեզ քաջառողջություն և հաջողություններ խաղաղության և ժողովուրդների բարեկամության ամրապնդմանն ուղղված Ձեր հայրենասիրական գործունեության մեջ:

Վ. ԿՈՒՐՈՅԵԴՈՎ
ՍՍՀՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԿՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՄՈՍԿՎԱ

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԱՉԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ս. Էջմիածին

Ձերդ Սրբություն, Նոր տարվա առթիվ ընդունեցեք իմ անկեղծ բարեմաղթությունները և ջերմագին շնորհավորանքը: Սրտանց ցանկանում եմ Ձեզ քաջառողջություն, անսպառ եռանդ Ձեր հայրենանվեր գործունեության, ժողովուրդների բարեկամության և խաղաղության ամրապնդման գործում:

Թող 1983 թիվը լինի մեր հայրենիքի և ամբողջ աշխարհի խաղաղության տարի, ժողովուրդների խաղաղ համագործակցության և բարեկամության տարի:

Խորին հարգանքով՝

ՌՈՒԲԵՆ ՊԱՐՍԱՄՅԱՆ
ՀՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ԵՐԵՎԱՆ